

ԴԵՏՐՈՍՅԱՆ

Հ39

1004
ՍՏ. ԼԻՍԻՑՅԱՆ

Հ56



ԴԵՊԻ ԵՔՍԿՈՒՐՍԻԱ

Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

374.6

Պ

ԴԵՊՈԻ ԵՔՍԿՈՒՐՍԻԱ


(Կցված է նայել որիմանի մարտուս
Անդրկովկասի համար)

A $\frac{I}{3619}$



ՀՐԱՏԱՐԱՍՈՒԹՅՈՒՆ Հ. Ա. Մ. ԽՈՐՀՐԴԻ № 51.

ՅԵՐԵՎԱՆ—1927



ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ,
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵՊ. 226Բ
ՏԻՐԱԺ 1000. Պ. 64

ԵՔՍԱԿՈՒՐՍԻԱՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ,
ՏԵՍԱԿՆԵՐԸ

Այժմ բանվորն ու գյուղացին, իրենց ապրուստի, տնտեսական դրուժյան բարելավման հետ ձգտում են ուսման, կուլտուրայի: Բայց շատ-շատերը հնար չունեն նորեն դպրոցներում սովորել, շատերն ել հասակներն առել են, սովոր չեն գիրք կարդալուն՝ իրենց ուժերով չեն կարող ուսման ծառայել հագեցնել:

— Ի՞նչ անել:

Ահա, ինչպես միշտ, ենպես ել այս դեպքում, մենք մեր հույսը միայն մեր ուժերի, մեր կարողության վրա պիտի դնենք: Պետք է ինքնազարգացման և եքսկուրսիաների միջոցով տիրանալ լույսին: Թե ի՞նչ է ինքնազարգացումը, ինչ ճանապարհով, ի՞նչպես պիտի գիր ու գիտություն սովորել այդ մասին մենք փոխադրել ենք հայերենի «Ինքնազարգացման ուղեցույց»* գիրքը:

* Հրատ. ՀԱՄ Խորհրդի 1927 թ., Յերևան, գ. 70 կ.:

կարդա արդ գիրքը, քեզ հետաքրքրող
շատ հարցերի պատասխանը կգտնես:

Իսկ թե ի՞նչ է եքսկուրսիան, ի՞նչ պի-
տի անենք, վոր եքսկուրսիան նույնպես
զենք դարձնենք մեր ձեռքում ուսմանն ու
կուլտուրային տեր դառնալու համար, այդ
մասին ներքևում:

— Եքսկուրսիա բառը լատիներեն է. նշա-
նակում է՝ վաղք դեպի դուրս, դուրս մագլցել:
Ներկայումս եքսկուրսիան այլ իմաստ ունի:

Եքսկուրսիա, դա կանոնավոր, կազմա-
կերպված, կուլեկտիվ դիտումն է, անմիջա-
պես կյանքում ուսանելու ամենալավ միջոցը:
Եքսկուրսիայի միջոցով «աշխարհ» տես-
նելն ու սովորելը մատչելի չէ, թե գրագե-
տին, թե անդրագետին, թե բանվորին ու
գյուղացուն, թե դպրոցականին և թե բնավ
դպրոցի յերես չտեսածին:

Առանց կտրվելու իրենց աշխատանքից,
բանվորն ու գյուղացին, ինչպես նրանք
սովոր են ամեն բան իրենց փորձով սովո-
րել, այնպես էլ եքսկուրսիաների միջոցով,
հաճախելով գործարաններն ու զարգացած
տնտեսությունները, քաղաքների թանգա-
րանները, ցուցահանդեսներ, շատ ու շատ
բան կիմանան, կփորձվեն, կընդլայնեն ի-
րենց միտքը:

Հետո, ինչպես գիտեք, եքսկուրսիան
մտերմացնում է, ստեղծում ընկերական մի-
ջավայր, հասարակականություն: Եքսկուր-
սիան միաժամանակ մարդուս ակտիվաց-
նում է, մարդուս մեջ զարգացնում է ձեռ-
ներեցությունը, ինքնագործունեությունը:

Արհմիությունները, կոմյերիտմիու-
թյունը, ակումբները և բոլոր կազմակերպու-
թյունները, վոր կոչված են զարկ տալու
լայն մասսաների ինքնագործունեյությանը,
ամեն կերպ ոժանդակելու բանվորի ու գյու-
ղացու հառաջադիմությանը, պետք է մեծ
յեռանդ ու միջոցներ հատկացնեն եքսկուր-
սիոն գործին:

Ինչպես յեղել է մինչ այժմ՝ չի գի-
տակցվել եքսկուրսիայի կենսական ու կա-
րևոր դերը՝ չպիտի շարունակվի: Մեծ ու-
շադրություն, լայնորեն ոգտագործեք եքս-
կուրսիաների կրթիչ-դաստիարակիչ դերը:

Նայած, թե ինչ նպատակ է առաջադր-
վում, եքսկուրսիան համապատասխան գույն
ու բնույթ պիտի ստանա:

Ամեն մի եքսկուրսիա էլ, պիտի իր
մեջ ունենա զրոսանքի մասեր: Մանավանդ
մասսայական եքսկուրսիաները, ամենից ա-
ռաջ հանգստի, զվարճության մի գեղեցիկ
միջոց են:

«Եքսկուրսիան գրոսանք է, վոր կազմա-
կերպվում է մի վորոշ նյութ, մի վորևե
հարց, հենց տեղում՝ շրջագայելու միջոցով
դիտելու համար»*: Գրում է մի եքսկուր-
սիոնիստ:

Եքսկուրսիաները կազմակերպվում են
դեպի մոտակա և հեռավոր վայրերը: Եքս-
կուրսիաները լինում են՝ մի որյա (յերբ
գնում են մոտակա անտառը, խորհրդային
տնտեսությունը, ամառանոցը) և մի քանի
որյա (экскурсия — кочевки). Մեզնում, դեռ
մի քանի որ տեղ (2—10—15) եքսկուր-
սիաներ՝ վոչ հեռավոր՝ չեն կազմակերպվում:

Կարելի չէ ողտագործել բանվոր-աշ-
խատավորների արձակուրդների ժամանակը
և կազմելով 15—20 և ավել մարդուց խում-
բակներ, գնալ եքսկուրսիա, քոչ (кочевка),
սա պակաս չափով չի վերականգնի առող-
ջությունը՝ քան հանգստյան տունը:

Շատ ու շատ կրթիչ-գաս-
տիարակիչ նշանակություն
ունի եքսկուրսիան. թվենք
մի քանիսը՝ ա) սովորեցնում
է դիտել շրջապատը, զարգացնում է դիտե-
լու, ըմբռնելու ընդունակությունները, բ)

* „Вопросы экскурсионного дела“, 1923 г.
Анцижера.

դրա հետ միասին, եքսկուրսիան ծանո-
թացնում է մարդու (այդ շրջապատին (գա-
վառագիտական-տոպոգրաֆիկ), գ) հասա-
րակական նշանակություն ունի՝ մոտ շրվ-
ման մեջ է դնում հարևան, շրջակա աղ-
գաթնակչության (զոդում) հետ, դ) եքս-
կուրսիան դա մի կռիվ է, քարացած, հին
կենցաղի, նիստ ու կացի դեմ, յե) եքսկուր-
սիան հավաքական, բնկերական, կոլլեկտիվ
զործողության ու կյանքի մի սիրուն զենք
է, չ) վերջապես եքսկուրսիան «առողջ
մարմնում, առողջ հոգին» զարգացնելու մի
միջոց է, ֆիզիքական դաստիարակման հրա-
շալի ձև:

ԵՔՍԿՈՒՐՍԻԱՆԵ՝ Վաղուց է, ինչ գրականու-
րի ԿՐԹԻՋ ՆՇԱ- թյան մեջ վեճ է պնդում ինչ
ՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ է եքսկուրսիայի գլխավոր նը-
պատակը—գիտություն տալ, թե մարդու
սովորեցնել ուսում ու գիտություն ձեռք
բերելու ճամբան:

Գործնականում, եքսկուրսիան շատ ու
շատ բան է տալիս, նա անմիջապես և՛ գի-
տության պաշար է տալիս, և՛ սովորեցնում
է շրջապատը ուսումնասիրել, դիտող լինել
և՛ առկային (20—25) եքսկուրսիաները ա-
վելի ծրագրված, հիմնավոր կերպով, մար-

դուռ սովորեցնում են՝ հետադուռել, ուսում-
նասիրել իր ցանկացած նյութը:

Մասնաշաղկապ եքսկուրսիաները նույն-
պես նպատակ պիտի դնեն, փոչ թե «թամա-
շա անել», «զբոսնել», այլ ընդլայնել բան-
վորական մասսաների մտավոր հորիզոնը:

Մասնաշաղկապ եքսկուրսիաները լինում
են բազմամարդ, բազմատարր:

— Խոչնդով են իրարից զանազանվում
խմբակային և մասնաշաղկապ եքսկուրսիա-
ները:

Հիմնականում զանազանվում են հետե-
յալով.

ա) Սովորական խմբակային (20—25
մարդ) եքսկուրսիաներում ղեկավարում է
միայն մեկը, փոր միաժամանակ և՛ կազմա-
կերպիչն է, և՛ բացատրող-լեկտորը: Պարզ
է, փոր մասնաշաղկապ, բազմամարդ 100—200
մարդուց կազմված եքսկուրսիաներում, մի
մարդով գործը չի տարվի, անհրաժեշտ են
մի շարք մարդիկ՝ կազմակերպիչներ, լեկ-
տորներ և այլն:

բ) Խմբակային եքսկուրսիաներում քիչ
մարդ լինելով անդադար շփման մեջ են լի-
նում, միշտ միասին են բոլորը, ստեղծվում
է մտերիմ կապ միմիանց միջև:

Իսկ մասնաշաղկապ եքսկուրսիաներում

ցրված են մարդիկ, սերտ շփման մեջ չեն,
յեթե մտերմություն ստեղծվում էր է, այն-
քան սերտ չի լինում ինչպես խմբակայինի
դեպքում:

գ) Ինչպես ամեն մի մասնաշաղկապ աշ-
խատանքում, այնպես էլ մասնաշաղկապ եքս-
կուրսիայում ղեկավարանցում է ագիտացիոն
կողմը, պարզ գաղափարներ են դնում և
պարզ էլ բացատրություն տալիս տեսած-
ներին. այնքան չեն խորանում տեսածների
գիտական-խրթին բացատրության մեջ: Այլ
ղեկավարը ցույց է տալիս և համառոտակի
պատմում:

Սրա հակառակ, խմբակային եքսկուր-
սիաների հիմնական մեթոդը, տեսածը ման-
րազննին քննելն է, լաբարատոր աշխա-
տանքը, հետադուռելը և այլն:

Մասնաշաղկապի դեպքում եքսկուրսանտը
յերբեմն հարցեր է տալիս, բայց հնարավո-
րություն չունի ինքը փորձել, ինքը ստու-
գել, մանրազննին դիտել և ինքնուրույն
կերպով փորեն յեզրակացություն հանել,
իսկ խմբակային եքսկուրսիայի ժամանակ,
մարդիկ հետադուռող գիտնականի պես, ինք-
նուրույն աշխատանքի մեջ են, դիտում են,
քննում, ամեն ինչ պարզում, ուսումնասի-
րում:

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ — Ի՞նչ է եքսկուրսիան:
 ԵՔՍԿՈՒՐՍԻԱՅԻ — Ինչպես մասսայական,
 ՄՅՈՒՍ ՇԻՄՆԱ- նույնպես և ամեն մի եքս-
 ԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ կուրսիա մարդուս պոկում է,
 կտրում իր սովորական կյանքի հոսանքից՝
 ամենից առաջ եքսկուրսիան սովորական
 տեղից մի ուրիշ տեղ գնալն է, հին դրու-
 թյան փոփոխումը: Եքսկուրսիա նշանակում
 է ճանապարհորդել, մի տեղ գնալ, մի վոր-
 ևս նոր բան տեսնելու, սովորելու համար:

Շատ ճիշտ է պրոֆ. Գրեսի (եքսկուր-
 սիոն գործի թեորետիկ և պրակտիկ) պըն-
 դումը, վոր «ճանապարհորդությունը եքս-
 կուրսիայի հոգին է»: Ինչպես ամեն մի
 եքսկուրսիայի, նույնպես և մասսայա-
 կան եքսկուրսիաների հիմնա-
 կան նպատակը պիտի լինի՝ ճա-
 նապարհորդելը:

Յերկրորդ հիմնական նշանը, մասսայա-
 կան եքսկուրսիայի, դա ընկերու-
 թյունն է, հավաքական, կոլ-
 լեկտիվ շփման զգացմունքը:
 Այս ներքին պահանջը միշտ յեղել է, բայց
 հեղափոխությունից հետո, բանվոր-աշխա-
 տավորական մասսաներն ավելի յեն ընտե-
 լացել, սովորել՝ միասնաբար, մեծ խմբե-
 րով մի վորևէ բան անել, իրար հետ լինել:

նմանատիպներ ձուլել մասսայի հորդ հեղե-
 դին:

Յերրորդ նշանը, դա տոնական տրա-
 մադրությունն է: Բացի փոքրաթիվ զուտ
 դիտական եքսկուրսիայից, ամեն մի եքս-
 կուրսիա, առավելապես մասսայականը բո-
 լորի մեջ տալիս է ուրախ տոնական
 տրամադրություն: Մանավանդ, յերբ եքս-
 կուրսիաներին ուրախ ու զվարթ տրամադ-
 րության դարկ են տալիս՝ որկհատրը, սա-
 դանդարները, յերգն ու ծիծաղը, կատակները:

Յեւ այսպես՝

Ճանապարհորդությունը,

Կոլլեկտիվ կյանքը,

Տոնականությունը

մասսայական եքսկուրսիաների հիմքը պի-
 տի կազմեն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒ Եքսկուրսիա կարելի յե կադ-
 ԹՅՈՒՆԸ մակերպել դեպի գործարան-
 ներն ու արհեստանոցները՝ արտադրական
 բնույթի: Արտադրական եքսկուրսիաները
 պիտի կազմակերպել 20—25 հոգու համար,
 խմբակներով*, Իսկ մեծ մասսաներ տանելու
 դեպքում (100—200 և ավել), եքսկուր-

* Կարգա «Производственные Экскурсии»,
 հոդվածների ժողովածուն. հրատ. 1924 թ. «Новая
 Москвы».

սանտներին պիտի բաժանել 20—25 մարդ
ունեցող խմբակների և հերթով ներս տա-
նել, ամեն ինչ բացատրել:

Եքսկուրսիաները լինում են կուլտուր-
պատմական բնույթի: Այս նպատակով գը-
նում են՝ թանգարանները, մուզեյները, ցու-
ցահանդեսները, շրջում են պատմական հը-
նությունները:

Եքսկուրսիաներ պիտի կազմակերպել
գեպի բնությունը (այգիներ, անտառ, դաշտ,
ձորեր, գետ և այլն) թե հանդստի ու զվար-
ճության և թե գավառն ու շրջապատը ու-
սումնասիրելու նպատակով:

ԾՐԱԳԻՐ ՅԵՎ ՄԱՐՇՐՈՒՏՆԵՐ

Ամեն մի եքսկուրսիա մի քանի մա-
սերից է կազմված. այսպես, եքսկուրսիոն
նյութը (գիտելը, վորոշ իրեր, յերևույթներ
ուսումնասիրելը), հետո, եքսկուրսիայի զրո-
սանքի մասը, ապա — եքսկուրսիան ուղեկցող,
ոժանդակ մասը (յերաժշտություն, խոսք,
յերգ և այլն):

— Ի՞նչպես անել, վորպեսզի բուն նը-
պատակին ծառայի եքսկուրսիան, այս յերեք
մասերն ել իրենց տեղն ունենան:

— Ամենից առաջ պիտի նյութի (թե-
մայի) լավ ընտրություն կատարել: Այնպի-
սի նյութ պիտի ընտրել, վորտեղ և գիտե-
լու, և՛ բացատրությունների և խաղերի ու
զբոսանքի, զվարճության հարմարություն-
ներ լինի:

— Հիմա մի ուրիշ հարց է ծագում.
ինչպես ընտրել եքսկուրսիայի նյութը,
թեման:

— Յեթե խմբակային եքսկուրսիա յի,

Ամենից լալն է, մի վորեն հարց վերցնել
և ուսումնասիրել:

Որինակ՝ խմբակը տանել թանգարան և
ուսումնասիրել մեր նկարչությունը, կամ
ավելի նեղ վերցրած մեր հին (մինչ խորհրդ.)
նկարչությունը և կամ վորեն նկարչի՝ որի-
նակ Մ. Սարյանի գործերը:

Սա նշանակում է, խորանալ, հիմնովին
հետազոտել, ուսումնասիրել նյութը:

— Բայց դուք գիտեք, վոր մասսայական
եքսկուրսիաների ժամանակ մենք այսպես
չենք կարող խորանալ, գիտականորեն ու-
սումնասիրել:

Յեթե մեծ խմբով դուք գնացել եք ա-
մենք Թիֆլիզ կամ Մոսկվա արդյունաբերա-
կան ցուցահանդեսների, պարզ է, վոր հա-
զարավոր ժողովրդի մեջ վոչ մի հնարավո-
րություն չի լինելու և դուք ել չեք կարող
վորեն մի հատիկ հարց նպատակ դնել (որի-
նակ տեքստիլ մեքենաների զարգացումը)
և այդ հարցը մանրազննին ուսումնասիրել:
Դուք նպատակ կդնեք, ընդհանրապես գիտել,
լավ ծանոթանալ արդյունաբերական ամբողջ
ցուցահանդեսը:

Մեծ, մասսայական եքսկուրսիաների
ժամանակ պիտի գիտել, ծանոթանալ միայն
կարևոր, տվյալ նպատակը պարզաբանող

արժեքավոր նյութերին, շատ չցրվել, ման-
րամասնությունների մեջ չմտնել:

Որինակ՝ գնում եք Ալլահվերդի—Թիֆ-
լիզ—Բագու. կնշանակի Ալլահվերդում կարող
եք լինել հանքերում (Շամլուղ) լսել զեկու-
ցում հանքերի մասին, ապա լինել ներքևի
(Մանես) դործարանում, լսել զեկուցում
պղնձաձուլարանների մասին և հետո ծանո-
թանալ բանվորության վիճակին. դրանից
շատ հեռուն անցնել թե ժամանակ, և թե
հնարավորություն չի լինի:

ՇԱՐԺՈՒՆՈՒ- Շատ վաղուց, բոլորին պարզ
ԹՅՈՒՆ հայտնի յե, վոր նյութը մար-
դըս լավ ըմբռնում է այն ժամանակ, յերբ
նա վոչ միայն լսում է նյութի մասին այլև՝
տեսնում, դիտում, շոշափում է:

Որինակ. յերբ Յերևանում գնացել եք
«Արարատ» գործարանը, լավ կլինի գիտեք
գործարանի բոլոր մասերը, փորձեք զա-
նազան խմիչքներ, ծանոթանաք արդյու-
նաբերության զարգացմանը և այլն:

Պակաս դեր չի խաղում, եքսկուրսիանե-
րի ժամանակ եֆֆեկտը, պատկերավորումը:
Սա նշանակում է, ցանկանալի յե, վոր
եքսկուրսիայի տեղը լինի պատկերավոր,
գեղածիժաղ, եֆֆեկտավոր, ապավորիչ: Որի-
նակ. Սևանի և Ալագյաղի գեղեցիկ, տալա-

վորիչ պատկերները յերբեք չեն մոռացվի
մարդու մտքից:

Հենց այս հիման վրա յե, վոր մենք
առաջարկում ենք, վորեն տեղ գնալիս, եքըս-
կուրսին խմբին դիտել տալ, ծանոթացնել
նախ տպավորիչ նյութերի հետ (աչքի ընկ-
նող, գունագեղ, գրավիչ) ապա սկսել ման-
րամասները, իսկ հետո վերջացնել նորից
եֆֆեկտավոր, տպավորիչ նյութերով:

Որինակ. Սևանում կարելի յե ծովը դի-
տել (սկիզբը գրավիչ), ապա կղզին, վերջում
ծովի վրա շրջել:

Վորպեսզի վառ լինի տեսածի, լսածի
հիշողությունը, այդ եքսկուրսիան տպավո-
րիչ լինի, կազմակերպիչներից նույնպես
շատ բան ե կախված: Յեթե որինակ՝ գնա-
ցել եք Սևան, մի ծուլացեք, ամեն ինչ ա-
րեք, վոր վառ տպավորություններ մնան
եքսկուրսանտների մեջ: Այսպես՝ պիտի առ-
ժամը 4—5-ին կղզու վրայից դիտել արե-
վածագը, ցերեկը ծովում կազմակերպել
խմբական լողեր, ձուկ բռնել ծովում, գի-
շերը խարույկ վառել և ընթրիլ ու լավ
ժամանց կազմակերպել:

§ ՇԱՆԴԵՍՆԵՐ Եքսկուրսիաներն անպայման
պիտի ունենան իրենց գեղարվեստական մա-
սը: Որինակ՝ Ֆիզկուլտ-խմբակը յելույթներ

ե կազմակերպում, մոգական լապտերով ցույց
են տալիս այնպիսի նկարներ, վոր գալիս
են ավելի պարզաբանելու տեսած նյութը,
փոքրիկ ներկայացում, ինսցենիրովկա ե լի-
նում և այլն:

Ի հարկե, ցանկալի յե, վոր ըստ հնարա-
վորին, այդ տեսարանային մասը կապվի
եքսկուրսիայի բուն նպատակի հետ, յերգը,
գեկուցումը, մոգական նկարները, ֆիզկուլտ
յելույթը կապվի բուն նպատակին:



ՄԱՍՍԱՅԱԿԱՆ

Մեծ ուշադրություն պիտի
ԳՈՐԾՈՂՈՐ- դարձնել, վորպեսզի եքսկուր-
ԹՅՈՒՆՆԵՐ սանտների տրամադրությունը

միշտ բարձր լինի: Դրա համար հենց սկզբ-
ից պիտի հետևել, վոր ժամանակին, նշա-
նակված տեղը բոլորը հավաքվեն, եդտեղից
կարգով-գեղեցիկ յերթով ճամբա ընկնեն և
այլն: Յեթե մեծ խումբ ե, պիտի մի քանի
խմբակների բաժանել, իրարուց բաժանել, վե-
լիսոպետիստ ֆիզկուլտուրնիկների միջոցով
կապ հաստատել այդ խմբերի հետ, ունենալ
յերաժշտություն, յերգել տալ խմբերին,
կոլլեկտիվ կերպով արտասանել վոտանա-
վորներ (դեկլամացիա), խմբով լողունգներ
կանչել և այլն:

Ս Ն Ո Ւ Ն Դ Շատերին կարևոր չի թվում
եքսկուրսիաների սնունդի հարցը, կարծես

1604
3619



անկարևոր ե: Մենք կասենք, վոր սնունդի հարցը, նրա լավ կազմակերպումը, հենց սկզբից կազմակերպիչների ուշադրութեան կենտրոնում պիտի դրվի: Պիտի ամեն հարմարութեամբ ստեղծել (սփսեներ, բաժակներ, մեծ կաթսաներ ևլն) վորպեսզի եքսկուրսանտները բոլորը միասին՝ թեյեն, ճաշեն, ընթրեն: Պիտի աշխատել, վոր պակասորդներ չլինի ամեն ինչ իր տեղին լինի, չմտածել թե՛ «դե լավ, մի կերպ յուր կպնանք», դա տպավորութեամբ կգցի:

Սնունդի հարցերին մեծ կարևորութեամբ. հենց սկզբից մտցրեք ծրագրի և նախահաշվի մեջ:

ԽԱՂԵՐ Եքսկուրսիաների ժամանակ, հավաքական գործողութեանների ձևերից մեկն էլ խաղերն են: Խաղերին մեծ ուշադրութեամբ: Այնպիսի խաղեր, վորոնց մասնակցեն բոլորը, կոլլեկտիվորեն: Այնքան հեշտ չե հարմար խաղերի հարցը. պիտի ընտրել: Խաղերը սկսելուց առաջ, հարմար տեղ պիտի գտնել, սկսել ենպիսի ժամանակ, վոր բոլորը մասնակցեն, ի նկատի ունենալ եքսկուրսանտների կազմը: Խաղերը հաճախակի պիտի փոփոխել. այնպիսի խաղեր սկսել, վոր տարբեր հատկութեամբ ունենան, որինակ՝ շարժումներ, ույժը, արտ-

գաշարժութեամբ խաղեր, զգուշութեամբ խաղեր, զարգացնող և այլն:

Խաղերի այս փոփոխութեամբ անհրաժեշտ է. այդ փոփոխումը հնարավորութեամբ է տալիս հանգստանալ և հետո տարբեր խաղերի մեջ բավարարութեամբ գտնել:

Պոլիտ և պրոֆլուտուն և այլ «դաստիարակչական» խաղերը ազատ բնութեամբ համար չեն, նրանք կճնշեն, նրանք շտամպ կդնեն բոլորի ուրախութեամբ վրա, նրանց չեն մասնակցում բոլորը, — միանգամայն անընդունելի յեն եքսկուրսիաների ժամանակ: Կարելի չե ոգտագործել՝ գյովունդ, աթուրմայի զանազան ձևերը, շղթան պատռել, մուկն ու կատուն, որ ու գիշեր, իրար ձեռքից բաշել և միմյանց խփել և այլն:

ԶՐՈՒՅՑ, ԴԱՍԱ- Յերբեք մոռացութեամբ չալի- ԽՈՍՈՒՅՑՈՒՆ տի տալ, վոր տեսածը պիտի բացատրել բոլորին, հասկացնել: Զրույց-դաստիարակութեամբ կարելի չե ունենալ՝ առողջապահութեամբ, բժշկութեամբ զանազան հարցերի, բնագիտական, բուսաբանական, արտադրական ու կենցաղային հարցերի շուրջը, վորոնք կապված լինեն եքսկուրսիայի հետ:

Խմբական եքսկուրսիաների ժամանակ

(Թագարան, գործարան...) նույնպես շատ
տախտություն չպիտի լինի: Յերբեմն
խմբակավարը կարճ բացատրություն պիտի
տա, ուշադրությունները այս կամ այն կող-
մը հրավիրի, դժվար բաները բացատրի և
այլն:

Ամենալավն է խոսակցական ձևին
դիմել, եքսկուրսիաների ժամանակ: Հետո
կարելի չէ վերջ հարցերին բացատրու-
թյուն տալ, զրուցել:

Պիտի հետևել, վոր բացատրություննե-
րի, խոսակցության, զրուցի ժամանակ բո-
լորը լսեն, անկարգություն չլինի:

ՅԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ Եքսկուրսիայի անբաժան
մասը պիտի կազմի յերաժշտությունը: Դա
կենդանություն, առույգություն, զվարթու-
թյուն է մտցնում, խաղերի և յերթի ժա-
մանակ շատ է ոգնում:

— Ի՞նչ տեսակի յերաժշտությունն է
լավ:

— Ամենից լավը փողավոր որկեստրն
է, բայց չեղած տեղը, կարելի չէ ոգտագոր-
ծել և սիմֆոնիկ խումբը և սաղանդարները:
Յեթե ակումբն ունի՝ պիտի ոգտագործել,
իսկ յեթե վոչ, դրսից վարձել յերաժշտա-
խումբը:

ԱՐՏԱՔԻՆ ՇՈՒՔԸ Առջևից հաղթականորեն
տարվելու յեն եքսկուրսիային մասնակցող
կողմակալների դրոշակները, ցանկալի չէ,
վոր ամեն մի կողմակալ ունենա իր նշան-
ները (տոնական գույնի) լինեն պլակատներ,
համապատասխան լոգունգներ և այլն:

ՄԱՐՇՐՈՒՏ Մարշրուտը ցույց է տալիս
այն կարգը, հերթականությունը, վոր ան-
հրաժեշտ է եքսկուրսիայի ժամանակ: Որի-
նակ. Յերևանից մեկնելիս Քանաքեռում 15
րոպե դադար, ապա Ն.-Ախտայում — այսինչ
բանն անել, մեկնել Սևան...

Նույն եքսկուրսիային մասնակցող տար-
րեր խմբերի համար, տարբեր մարշրուտ-
ներ կարելի չէ կազմել:

Մարշրուտը կազմելիս պիտի լի նկատի
ունենալ եքսկուրսիաների կազմը, արտա-
քին պայմանները, փոխադրական միջոց-
ները և այլն:

ԵՔՍԿՈՒՐՍԻԱՆԵ- Առաջինը պիտի հաշվի առ-
րի ԿԱԶՄԻ ՇԱՇ-

ՎԱՌՈՒՄԸ ցողներինըստ արտադրության՝
ովքեր ինչ արհեստի մարդիք են: Ամեն մի
արտադրության աշխատողներին պիտի ա-
վելի մանրագնանին կերպով ծանոթացնել
եքսկուրսիայի այս կամ այն հարցի հետ:

Ասենք, Թիֆլիսում Անդրկովկասյան

Արդյունաբերական ցուցանիշներն են: Այժմ
մի 100 հոգով գնում եք թիֆլիս: Դուք
պարտավոր եք հաշվի առնել բոլոր պրոֆե-
սիայի մարդկանց՝ մետաղագործներին, կա-
ռուցողներին, բառարակներին և այլն, վոր-
պեսզի ամեն մի խմբի մարդկանց լավ հաս-
կացնեք տվյալ ճյուղը. այսպես՝ մետաղա-
գործներին կհետաքրքրի մեքենագործու-
թյան հարցերը, բառարակներին գյուղատն-
տեսության և այլն:

Հետո, պիտի հաշվի առնել նաև եքսկուր-
սանտների հասակը: Տարիքավորները և յե-
րիտասարդները տարբեր ձգտումներ, տար-
բեր պահանջներ ունեն:

Անհրաժեշտ է հաշվի առնել նույն-
պես կրթական պատրաստությունը, տարբեր
մտավոր մակարդակի մարդիկ, տարբեր բա-
ներով են հետաքրքրվում: Բարձրագույն
կրթություն ունեցողները ավելի պահանջ-
կոտ են, խորանում են, անպատրաստները՝
միայն «թամաշաչի յեն», նրանց պիտի ամեն
բան բացատրել:

Եքսկուրսիայի ընթացքում, չպիտի ան-
ուշադրության մատնել նաև եքսկուրսանտ-
ների բնորոշ գծերը և տրամադրություննե-
րը: Որինակ՝ մետաղագործ բանվորները
կարգապահ են, կազմակերպված. բառարակ-

ները աչքի յեն ընկնում ուրիշ հատկանշա-
կան կողմերով:

ՓՈԽԱԴՐԱԿԱՆ ՊԻՏԻ հոգալ, վոր ժամանա-
սիճոցներ կին լինեն փոխադրական մի-
ջոցները, հարմար կերպով բոլորը տեղա-
վորվեն: Յեթե խճուղով և ավտոներով են
գնում, վորպեսզի խմբերը իրար հետ լի-
նեն, չցրվեն. յերբեմն իջնեն և վրաով քայլեն՝
հանգստանալու համար:



III.

ԵՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ՅԵՐԲ ՍԿՍԵԼ, ՄԵԾ ուշադրություն պիտի ԿԱԶՄԸ, ԹԻՎԸ դարձնել եքսկուրսիաների կազմակերպչական կողմին: Մեզնում, շատ ժամանակ մատերի արանքով են նայում, լայն կերպով չեն հայտարարում, չեն հոգում բոլոր հարմարությունների, եքսկուրսիայի հետ կապված գործնական հարցերի մասին. «յուրա կգնանք», ահա ասիական հին սովորությունը:

Այսպես չպիտի լինի, նախկին ասածներից դուք համոզվեցիք, վոր եքսկուրսիան շատ արժեքավոր կենսական բան է, շատ բարդ ու բազմակողմանի յե նրա բովանդակությունը. ուշադիր, խնամքով աշխատանք է պահանջում նրա կազմակերպումը:

Ուրեմն չուշացնեք, չձգձգեք, մեծ ուշադրություն նախապատրաստական աշխատանքներին, վորքան հնարավոր է շուտ ըսկսել եքսկուրսիայի կազմակերպչական գործը, ամեն բան լավ հիմքերի վրա դրեք:

— Հիմա այն հարցին, թե ինչ կազմ պիտի ունենա եքսկուրսիան:

Վորոշ տեղեր նկատվել է, վոր ակումբի անդամներին, կամ խմբակների անդամներին ենդրկում եքսկուրսիա առաջի հերթին: Սա անթույլատրելի յե: Թե խմբակային, և թե առավելապես մասսայական եքսկուրսիաներում պիտի ընդգրկել միության բոլոր անդամներին անխափր:

Հետո մանուկների հարցը: Պատահում է, վոր բաղամամարդ, մասսայական եքսկուրսիաներում գալիս են մայրերը և բերում են մանուկներին, ի՞նչ անել:

— Յեթե դուք եքսկուրսիան այնպես եք կազմակերպել, վոր միության անդամներն իրենց ընտանիքներով են յեկել, չի կարելի հրել, հեռացնել յերեխաներին, թե չե մայրերն ել չեն գա, դա նոր կենցաղի մի հաղթանակն է, թող մասնակցեն և՛ մայրերը, և՛ յերեխաները. աշխատեք սպասարկել բոլորին:

Ցանկալի յե միությունների գծով կազմակերպել առանձին մասսայական եքսկուրսիաներ միության անդամների յերեխաների համար առանձին, այսպիսով մենք բավարարած կլինենք և՛ յերեխաների աճող պահանջը:

— Իսկ ընդհանրապես մասնակցողներին
թիվը ինչքան պիտի լինի:

— Որինակելի, միանգամայն ցանկալի
թիվը, մասսայական եքսկուրսիաների՝ ըն-
դունված է 40—50 մարդ, խմբակայինը 5
— 10 — 15 — 20: Բայց խոշոր կենտրոններում,
յեթե ապահովված է, եքսկուրսիայի թե-
նյութական, թե կազմակերպչական ու մե-
թոդական կողմերը, կազմակերպում են
մասսայական եքսկուրսիաներ 200—300 և
ավելի մարդուց:

ԱՎՏԻՎԱՅՐԵՔ Մասսայական եքսկուրսիանե-
րը հավաքական կյանքի, միա-
սին, կոլլեկտիվ կերպով զվարճանալու, շրջ-
ջադայելու, կոլլեկտիվ գործողութայան մի-
շատ գեղեցիկ միջոց են: Հենց դրա համար
է, վոր եքսկուրսիաների ղեկավարները, ա-
մեն ինչ պիտի անեն, վորպեսզի բոլոր եքս-
կուրսանտները ակտիվ լինեն, մասնակցեն
կոլլեկտիվի կյանքին:

Պատահում է 150 հոգի գնում են, ա-
սենք, մի գործարան, կամ խորհրդային տըն-
տեսություն տեսնելու և դրանցից միայն
60 հոգին են կանոնավորապես ամեն բան
դիտում, ծանոթանում: Նույնպես և բոլոր
խաղերին, պարերին, մյուս զվարճություն-
ներին չեն մասնակցում հաճախ:

Ղեկավարները, պիտի իմանան ամեն
ինչիպատճառը, ժամանակին վերացնեն թերի
կողմերը ամեն հարմարություն ստեղծեն,
վորպեսզի բոլոր ընկերները ակտիվ կերպով
մասնակցեն եքսկուրսիայի բոլոր մասերին:

Թե ինչպես անել գործնականապես,
վորպեսզի այդ նպատակին հասնենք, դրա
մասին է, վոր հիմա կգրենք:

ԽՄԲԱԿՆԵՐ ՅԵՎ ՄԱՍՍԱՆ ԲԱԶՄԱՄԱՐԴ Ե,
ՄԱՍՍԱ ցրված, բոլորին միասին չենք
կարող ամեն կերպով բավարարել, միանգա-
մից ցույց տալ՝ իրերը, յերևույթները, բա-
ցատրել, հասկացնել, ստուգել թե վորքան
են յուրացրել:

Դրա համար է, վոր մասսային պիտի
բաժանել, խմբակներին: Ամեն մի կոլլեկտիվ
կյանք, անհրաժեշտորեն պիտի հիմք ունե-
նա փոքր կոլլեկտիվները: Ամբողջ մասսան
բաժանեք փոքր կոլլեկտիվների և ապա
եքսկուրսիան այնպես ղեկավարեք, վոր
կենդանի սերտ կապով միաձուլվեն այդ
բոլոր խմբակները: Խմբակների որգանական
միավորումը միշտ տալիս է ուժեղ կոլլեկ-
տիվ:

— Հիմա հարց է ծագում, ինչպես և
ինչ խմբակների բաժանել:

— Ամենից լավն է, յեթե մեծ մասսա

յի, (200—300) բաժանել խմբակների ըստ հիմնարկների կոլլեկտիվների: Յեթե 40—50 մարդ են, կամ ավելի պակաս, հենց եքըսկուրսիայի ժամանակ, պիտի սլարդել, թե ով ի՞նչով է հետաքրքրվում, ի՞նչ կուզեր անել, ահա այդպիսիներից կազմել փոքրիկ խմբակներ, բայց պայմանով, վոր այդ խմբակները շարժվին և ամեն ինչ անեն միայն եքսկուրսիոն ծրագրի համաձայն:

Ի՞նչ ԱՆԵԼ Մասսայական եքսկուրսիա-
ԽԱՅՏԱԲՂԵՏՈՒ- ներին մասնակցում են հա-
ԹՅԱՆ ԴԵՍ ճախ՝ յերիտասարդներ, տա-
րիքով մարդիկ, կանայք և այլն: Դրանցից յուրաքանչյուրը տարրեր կողմ է քաշում: Յերիտասարդներն ամեն բանում շտապում, շարժուն են, այլ բաներով են հետաքրքրվում, տարիքավորները՝ տարրեր և այլն: Ի՞նչ անել այս խայտարդետույթյան դեպքում:

— Միակ միջոցը դրա դեմ, նախապատ-
րաստական շրջանում, լավ կազմակերպելն
է, հետո -- ասացինք փոքրիկ խմբակներ
կազմելը:

Միության գծով, հենց սկզբից, լավ
պիտի պարզաբանել կազմակերպվող եքըս-
կուրսիաների ծրագիրը՝ վորպեսզի մարդիկ
կանոնավոր ընտրություն կատարել:

Հետո խմբակավորները ճանապարհին,
հանգստի միջոցներին, պիտի շփվեն, զրու-
ցեն անհատների հետ իմանան նրանց պա-
հանջները և մտցնեն յենթախմբակների մեջ,
աշխատեն բավարարել բազմապիսի պահանջ-
ներին:

ԱՐՏԱՔԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ո՞Վ Ե ԿԱԶՄԱ-ԿԵՐՊՈՒՄ Միութենական մարմինները եքսկուրսիոն աշխատանքի ընդհանուր ծրագիրը, մարշրուտներն են կազմում, լուծում են՝ կազմակերպչական, մեթոդական կարևոր հարցերը: Բայց ամեն մի առանձին եքսկուրսիա պետք է սկիզբ առնի տեղկոմի, կուլտ-հանձնաժողովի կամ մի խումբ ընկերների ձեռներեցությամբ:

Ներկայումս մեր ակումբներն ամրապնդվել են, ունեն ուժեր, թե ակումբային-գեղարվեստական և թե կազմակերպչական, նրանք պատվով առաջ կտանեն եքսկուրսիոն գործը: Եքսկուրսիաների կազմակերպումը պիտի կատարեն ակումբները:

Մասնաշաղկի եքսկուրսիաների կազմակերպիչը, պիտի լինի բանակումը: Իսկ վորտեղ ակումբներ չկան՝ կարմիր անկյունները, տեղկոմները և միութենական կազմակերպությունները:

Ընդհանուր ղեկավարությունը, մասնաշաղկի

յական եքսկուրսիաների, կատարում է ակումբի վարչությունը, չլինելու դեպքում միութենական այլ կազմակերպություններ, իսկ ամեն մի եքսկուրսիայի համար նշանակվում են առանձին «յեռյակներ», «հագյակներ»: Այդ կատարող մարմինների մեջ պիտի մըտնեն թե ակումբի ու միության ներկայացուցիչները, թե մասնակցողներից, և թե ղեկավար անձներից: Զանազան հանձնարարությունների համար կարելի յե ոգտագործել եքսկուրսանտների ուժերը (կապի համար, խաղերի և այլն):

ՊԱՏՐԱՍՏԻՐ Շատ կենսական, կարևոր ԱՄԵՆ ԻՆՁ բաներ կան, վոր ուշադրությունս չառնող թյան կենտրոնում պիտի դրվեն, իր ժամանակին, նախորոք պատրաստվեն:

Ամենից առաջ կապ պիտի հաստատել այն վայրի (տեղի) հիմնարկների, կազմակերպությունների հետ, վորտեղ ցանկանում եք եքսկուրսիաները դրկել: Նույնքան կենսական է փոխադրական միջոցների, սնունդի, իջեվանների, հարցերը:

Յեթե յերկաթուղով եք գնալու, ժամանակին պիտի հայտնել յերկաթուղու վարչությանը, ժամանակին տոմսեր ստանալ, ապահովել տեղերի խնդիրը:

Յեթե ավտոներով կամ այլ միջոցներով
պիտի ճանապարհորդել, նորից շտապ պիտի
շարժվել, ամեն ինչ նախորոք անել, ժամա-
նակին:

ՀԱՎԱՔԱՏԵՂԵՐ, Հավաքվելու համար տեղ
ԲԱԶԱՆԵՐ կարելի չե ունենալ բանակու-
մբը. յեթե ակումբ չկա, քաղաքի կենտրոնում
մի վորեն տեղ: Ցանկալի չե, վոր ամեն մի
միություն ունենա իր համար առանձին,
մշտական հավաքատեղի: Այդ հավաքատեղին
պիտի կահավորված լինի, դարդարված պլա-
կատներով, լողունգներով: Հավաքատեղում
իր ժամանակին, պիտի լինեն մի-յերկու
ընկերներ կազմակերպիչներից, վոր ընդու-
նեն մարդկանց, բացատրություններ տան և
այլն:

Յեթե միորյա եքսկուրսիա ե կազմա-
կերպվում, ասենք՝ քաղաքի այգիներում,
մոտակա անտառում և այլն, պիտի կազմա-
կերպել (մի վրանում և շենքում) նաև ըն-
դունման պունկտ: Այդ ընդունման պունկ-
տում պիտի ունենալ տեղեկատու բյուրո,
վորն ամեն տեսակի տեղեկանքներ կտա
եքսկուրսանտներին, պունկտում պիտի ստեղ-
ծել հարմարություն՝ եքսկուրսանտների շո-
րերն ու իրերը պահելու, ունենալ փոքրիկ

ապտեկա, նախաճաշ և ճաշ պատրաստելու
համար հարմարություններ և այլն:

Իսկ յեթե եքսկուրսիան հեռավոր ե,
տեղում չե մի քանի որ, անհրաժեշտ ե ոգ-
ավել միայն յեղած բազաներից:

Վրաստանում և Ադրբեջանում, նույն-
պես և Անդրկովկասի բոլոր խոշոր քաղաքնե-
րում կան եքսկուրսիոն բազաներ: Հայաս-
տանում առայժմ չկան, բայց լուսժողովոմա-
տը անպայման պիտի կազմակերպի, թե չե
անհնարին ե եքսկուրսիոն գործը տանել,
առանց բազաներ ունենալու:

Միութենական կազմակերպությունների
միջոցով նախորոք պիտի կապվել համապա-
տասխան վայրի հետ, վորպեսզի բազանե-
րում տեղեր տրվեն:

ՓՈԽԱԴՐԱԿԱՆ Շատ կարևոր ե եքսկուրսիոն
ՄԻՋՈՑՆԵՐ գործում, փոխադրական մի-
ջոցների հարցը: Առաջուց պիտի մտա-
ծել դրա մասին: Ամենից լավն այն կլի-
նի, յեթե ամեն մի եքսկուրսիոն խումբ,
ասենք 40—50 մարդ, ստանա առանձին հար-
մարություն՝ առանձին վագոն, ավտոներ,
լուսկաներ և այլն: Պիտի աշխատել չխառ-
նվել կողմնակի հասարակության հետ, չե
վոր եքսկուրսիաների մեջ կուլտ-աշխա-

տանքներ պիտի տանել, միասին յերգել,
զվարճանալ:

ԾՐԱԳՐԻ ԼՐԻՎ Մեզնում նկատվում է, վոր
ԿԱՏԱՐՈՒՄՆ նախ շատ եքսկուրսիան խմբեր
քնավ ծրագիրը չեն ունենում, շատերն ել
մանրամասն չեն կազմում ծրագիրը, մաս-
սայականացնում: Սա վոչնչի նման չէ: Ա-
ռանց մանրամասն, կանոնավոր կերպով
մշակած ծրագրի, աշխատելը՝ խալտուրա չէ,
նշանակում է խարխալել, մի բան տակից-
զլխից անել:

Ծրագիրը պիտի մանրամասն լինի, ծը-
րագրի կետերի կատարման ժամանակը նա-
խորոք պիտի գրել (որինակ. առավ. ժամը
9-ին դուրս գալ դեպի X կանգ առնել Y տե-
ղում):

Ծրագիրը պիտի աշխատել չխախտել,
բայց յեթե անկախ ձեզնից խախտվեց, եքս-
կուրսիայի ծրագրի մեջ մտցրեք այդ փոփո-
խությունը և հարմարացրեք հետագա անե-
լիքներին:

ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆ Բավական է, վոր մասսա-
յական եքսկուրսիայում մի քանի հարբած-
ներ յերևան, կամ մի-յերկու անկարգներ և
ամբողջ տալավորությունը, կոլլեկտիվ ուրա-
խությունը կփոխվի: Կազմակերպիչները,
զիտակից ընկերները խստիվ պիտի հետևեն

վորպեսզի վոչ մի անկարգություն, անկա-
նոնություն, մանավանդ խուլիգանության
և վոչ մի դեպք չլինի:

Յեթե եքսկուրսիան մեծ խումբ է, ա-
սացինք, պիտի բաժանել փոքր խմբակների,
խոկ այդ խմբակներում նշանակել խմբակա-
վարներ: Ահա այդ խմբակավարներն են,
վոր մեծ ուշագրություն և յեռանդ պիտի
թափեն պրոլետարական կարգ ու կանոն
ստեղծելու մասսայական եքսկուրսիաներում:

Կազմակերպիչները, այդ խմբակային
ղեկավարները, խիստ միջոցներով, հրաման-
ներով, ստրաժնիկությամբ չեն, վոր որինա-
կելի կարգ ու կանոն պիտի ստեղծեն, այլ
հենվելով բոլոր ընկերների ինքնագիտակ-
ցության, ներքին, ինքնաբուխ դիսցիպլի-
նայի վրա: Վորպեսզի դիսցիպլինան եքս-
կուրսիաների կամքի հակառակ չխախտվի
ամեն հարմարություն իր տեղին պիտի լինի:

Բոլոր խմբակների միջև կապ պիտի լի-
նի, վելոսիպետիստ ընկերների, հատուկ «կապ
պահողների» միջոցով: Ամեն մի խմբակում
քայլելու, կանգնելու և յերգերի համար,
ինչպես պիտի ենթարկվի մոտ է, պիտի ունե-
նալ սիգնալիզացիա:

Ղեկավարները և խմբակները նշաններ

պիտի կրեն թեւրին և կենդանի կապի մեջ
լինեն միմյանց հետ:

ԵՔՍԿՈՒՐՍԻԱՆԵ- Վորտեղից միջոցներ - ճա-
րի ֆիւսնսնէրը բել, ով պիտի հոգա ծախսե-
րը: Ահա հարցեր, վոր գործնական, եյական
նշանակաւթյուն ունեն:

Ինչպես ամբողջ եքսկուրսիոն գործի,
պարզ է, վոր նույնպես և նրա ֆինանսա-
կան մասի կազմակերպումը իրենց վրա պի-
տի վերցնեն միութենական կազմակերպու-
թյունները: Միութենական մարմիններն են,
վոր արտոնյալ տոմսեր պիտի ձեռք բերեն,
իրենց կուլա-ֆոնդից միջոցներ տրամադրեն
եքսկուրսիաներին, ներկայացումներ-հան-
դեսներ կազմակերպելու միջոցով, զարկ
տան մասսայական եքսկուրսիաներին:

Ցանկալի չէ, վոր քիչ ստացող բանվոր-
ները իրենց սուղ միջոցներից խոշոր ծախ-
սեր չանեն. նրանց պիտի ամեն ինչով ո-
ժանդակել:

Եքսկուրսանտները նույնպես անմասն
չպիտի լինեն: Ճաշը պիտի լինի նրանց
հաշվին, յերկաթուղիների ծախսերը նույն-
պես: Բազաների ծախսի մի մասը եքսկուր-
սանտների վրա կարելի չէ զցել, մյուս մա-
սը արհեստագործութեան:

ՃԱՄԲԻ ՀԱՐՄԱ- Եքսկուրսիաների համար մըշ-
րոթթոններ տապես պիտի ունենալ մի
քանի ճանապարհորդական հարմարություն-
ներ. այսպես՝ վորոշ թվով կրուժկաներ, մի
քանի մեծ թեյամաններ, ջրի ամաններ,
շարժական ապուշկա, դանակներ, վրաններ,
բահեր, գամակներ, բոտանիզարկաներ (մի-
ջատներ և այլն պահելու): Ցանկալի չէ
այնպես անել, վոր եքսկուրսանտների մեջ
լինի մի լուսանկարիչ զանազան տեսարան-
ներ և եքսկուրսանտներին նկարելու համար:

ԻՆՉ ԱՇԽԱՏԱՆՔ ՏԱՆԵԼ ԵՔՍԿՈՒՐ- ՍԻԱՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

ԵՔՍԿՈՒՐՍԱՆ-
ՏԻՆ ՊԻՏԻ ՊԱՏ-
ՐԱՍՏԵԼ

Ասենք թե, ամեն բան
կազմակերպել էք՝ պատրաստ
ե. ել ի՞նչ հիմնական անե-
լիքներ ունեք:

Ամեն անգամ, յերբ միայն զրոսանքի
համար չե եքսկուրսիան, այլ նպատակ ունի
ծանոթացնել մասնային՝ տնտեսական, ար-
տադրական, շինարարական, պատմա-հեղա-
փոխական կամ մի այլ հարցի հետ պիտի
նախքան մեկնելը, մի քանի որ առաջ, հրա-
վիրել եքսկուրսիային մասնակցողներին, մի
կամ մի քանի զեկուցումների, զրույցների
միջոցով նրանց գաղափար տալ այն հիմնա-
կան հարցերի մասին, վոր գնալու յեն տե-
սելու: (Որինակ՝ նախորոք մի զեկուցում
Ջագեսի մասին, Ալլահվերդու մասին, Բագ-
վի նալթարդյունաբերության մասին ելն):
Վոր մի եքսկուրսիա անպատրաստից

հանկարծակի չպիտի լինի: Եքսկուրսիան
սյուրսյուրիզ չե: Ամեն մի եքսկուրսիա մի
միայն պիտի լավ իմանա եքսկուրսիայի
նյութը՝ թեման, այլև նա իրեն պարզ պիտի
պատկերացնի եքսկուրսիայի բովանդակու-
թյունը:

Յեթե ասենք, Հայաստանի պղնձաար-
դյունաբերության մասին եքսկուրսիա եք
կազմակերպել, նախապատրաստական զե-
կուցման եք հրավիրում միության անդամ-
ներին, պարզ ե, նրանք կգան, վորոնք հետա-
քրքրվում են այդ հարցով, ցանկություն
ունեն գնալ տեղում ծանոթանալ պղնձաար-
դյունաբերությանը:

Պարզ ե, վոր ձեր կազմակերպած, այդ
նախապատրաստական զեկուցումը, պիտի
լինի ազիտացիա, հետաքրքրություն ա-
ռաջացնելու մի զենք՝ տվյալ եքսկուրսիան
գլուխ բերելու գործում, բայց վոր թե ման-
րազննին դասախոսության բնույթ ունենա,
վոր մասսան ել կարիք չզգա գնալ տեսնե-
լու:

Նախապատրաստական զրույց-զեկու-
ցումները՝ մեկնելուց 1—2 որ առաջ պիտի
կազմակերպել, վորպեսզի հոգեբանական
տրամադրություն տաճանա, տեղ հասնելուն
պես հիշեն լուծները:

Յանկալի յե, վոր այդ զրույց-դեկու-
ցումները անցկացնեն, վոչ թե հատուկ մար-
դիկ, այլ այն դեկավարները, վոր մեկնելու
յեն խմբի հետ և ամբողջ եքսկուրսիայի ըն-
թացքում տալու յեն բացատրություններ,
վերջում պարզելու յեն արդյունքները:

ԱԿՈՒՄԲՆԵՐԸ Մասսայական եքսկուրսիա-
ները պիտի կապված լինեն
ՅԵՎ ՄԱՍՍԱՅԱ- ակումբների հետ: Ակումբն
ԿԱՆ ԵՔՍԿՈՒՐ- ամբողջովին և նրա բոլոր
ՄԻԱՆԵՐԸ խմբակները յեռանդուն մասնակցություն
պիտի ունենան եքսկուրսիաներին: Բոլոր
խմբակներն ել հսկայական գործ ունեն ա-
նելու մասսայական եքսկուրսիաներում:

Ասենք թե 100—150 մարդ ակումբի
վարչության ջանքերով կազմակերպվել են
և գնացել 4—5 վերստի վրա գտնվող Խոր-
հրդային տնտեսությունը, կամ հիդրոկա-
յանն ու նրա ձորը եքսկուրսիայի, ինչ պի-
տի անեն ակումբային խմբակները:

Ահա թե ինչ՝

ա. Ք ա դ խ մ բ ա կ ը.— դեկավարվելով
եքսկուրսիայի նյութով և ընթացիկ քաղա-
քական մոմենտով-պիտի կազմե լոգոնգնե-
րի և պլակատների նախագծերը, նյութ պի-
տի տա (քաղաքական) ինսցենիրովկայի,
խաղերի և այլն: Եքսկուրսիայի վայրի և նը-

րա տնտեսական նշանակության հետ պիտի
ծանոթացնի եքսկուրսանտներին (զրույցի
և այլ միջոցներով):

բ. Պ բ ո ֆ խ մ բ ա կ ը.— Պիտի ոգնի
քաղխմբակի աշխատանքներին, հետո, եքս-
կուրսիայի ժամանակ, իր մի քանի անդամ-
ների միջոցով, հետազոտե (զրույցի, կեն-
դանի շփման միջոցով) բանվորական մաս-
սայի պահանջները, զրույց ու վեճեր առա-
ջացնի ընթացիկ պրոֆհարցերի շուրջը:
Մասսայի առաջադրած հարցերը, վերադար-
ձից հետո, դեկուցումների, պարամունքնե-
րի նյութ դարձնի և այլն:

գ. Գ բ ա կ ա ն խ մ բ ա կ ը.— Կարող ե
հատուկ նյութեր գրել տվյալ եքսկուրսիայի
համար և կամ ամառվա պատրաստած ընտիր
նյութերից պատմվածքներով, վոտանավոր-
ներով, ֆելետոններով՝ հետաքրքիր ու գրա-
վիչ դարձնել եքսկուրսիան, ապա և նոր
նյութեր հավաքել իր խմբակի ներքին աշ-
խատանքների համար:

Յերգ-յերաժշտական խմբակներին, նույն-
պես և նկարչական-թատերական, կենդանի-
լրագրերի խմբակների աշխատանքը պարզ ե:

Պ ա տ ի լ բ ա գ ի ը.— Չմեռվա ըն-
թացքում և առանձնապես մարտ ամսից,
պիտի նյութեր տեղավորի, բացատրական

հողմածներին, տեղկումի ընդունած ծրագրի ու
մարշրուտների քննության միջոցով մաս-
սաներին տեղյակ դարձնի՝ եքսկուրսիոն
աշխատանքներին: Ամեն մի առանձին եքս-
կուրսիա պիտի անդրադառնա պատի լրա-
գրի հայելում՝ հողմածներին, տպավորու-
թյուններին, ֆոտո և կարեկատուրային նը-
կարներին միջոցով:

Հետո. մասսայական եքսկուրսիան մար-
դուս հանում է ամենորյա վիճակից և բը-
նության գրկում, գեղածիծաղ, վոգևորվող
պայմաններում, ինչ վոր ներքին պահանջ
և զգում մարդս մի բան գրելու, ստեղծա-
գործելու:

Սա բոլորիս հայտնի յե:

Ի՞նչ պիտի անել, այս ստեղծագործա-
կան տրամադրությունները անուշադրու-
թյան չմատնելու համար:

Կարելի չե ունենալ մի-յերկու հատ մեծ
տետրակներ, վորտեղ ընկերները կգրեն ի-
րենց տպավորությունները, վոտանավորներ
և այլն: Կարելի չե հենց այդտեղ կազմա-
կերպել պատի լրագիր, կարելի չե թերթիկ-
ներ բաժանել, անկետաներ ցրել և ի մի հա-
վաքել ընկերների տպավորությունները:

Ցանկալի չե նախքան մեկնելը, ընկեր-
ներին զրույցների ժամանակ բացատրել

վորպեսզի ունենան մշտական եքսկուրսիոն
հուշատետրեր, վոր միշտ գրեն իրենց զրո-
սանքների, եքսկուրսիաների հուշերը:

Ա. կ ու մ բ ա յ ի ն գ ռ ա դ ա ր ա ն ը
հույնպես շարունակ պիտի ճանապարհորդի
եքսկուրսիաների հետ: Գրադարան-ընթեր-
ցարանը պլակատների միջոցով խորհուրդ-
ներ պիտի տա եքսկուրսիայի հետ կապված
հարցերի պատասխանն այս կամ այն զըր-
քում գտնել, գրադարան-ընթերցարանը բաց
ողում մի-յերկու կարևոր հարցերի մասին
կարող և կազմակերպել բարձր ընթերցում-
ներ և այլն:

ԵՔՍԿՈՒՐՍԻԱՅԻ Ամեն մի եքսկուրսիայից
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ հետո, պիտի հավաքել եքս-
դիՏԻ ԽՈՐԱՅՆԵԼ կուրսանուներին և վերլուծել,
քննել եքսկուրսիայի հիմնական հարցերը:

Զրույցների միջոցով, առաջի հերթին
պիտի բացատրել, պարզել այն հարցերը,
վորոնք, զանազան պատճառներով, մնացել
են մութ, չեն բացատրվել եքսկուրսանու-
ներին:

Տեսածը հիմնավորելու ամենալավ մի-
ջոցներից մեկն էլ այն է, վոր խմբակավարը
հարց ու պատասխանի միջոցով հիշեցնի
եքսկուրսանուներին, պարզաբանի, ամփոփի,
տա սինթեզը (համադրումը) եքսկուր-
սիայի բոլոր հարցերի:

ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այնքան, վորքան դեռ նորությունն է մեզնում եքսկուրսիոն գործը, վորքան դեռ լայն գաղափար չկա եքսկուրսիաների կըրթական-գաստիարակչական կարևոր նշանակության մասին, այդ իսկ պատճառով էլ, մինչ այժմ մեզնում եքսկուրսիոն խմբակներին չեն տրամադրում հատուկ ղեկավարներ: Պարզ է, վոր եքսկուրսիան կվերածվի միայն զբոսանքի, «թամաշայի», յեթե «յուլագնան» առանց ղեկավարների: Ընդհանուր կարգ է ընդունված Ռուսաստանում, 20—25 եքսկուրսիոն խմբակին տրամադրել մեկ ղեկավար, իսկ մասսայական եքսկուրսիաներին (100—200 և բարձր) յուրաքանչյուր 50-ին մի ղեկավար:

Ամեն մի ղեկավար պիտի իմանա՝ ա) այն նյութը, վոր ինքը բացատրելու յե եքսկուրսիայի ժամանակ, բ) իմանա թե ինչպես պետք է հեշտ և հասկա-

նալի կերպով պարզել (մեթոդը), լավ ծանոթ լինի եքսկուրսիոն մասսայի կազմին, սոցիալական բնույթին:

Մասսայական, բազմամարդ եքսկուրսիաներում, չի ոգնի չոր մասնագիտությունը. ղեկավարը պիտի լինի՝ յերիտասարդ, վառվառ, վոգեորվող, մասսայիկ:

Ղեկավարները ամենից առաջ կազմակերպչական ընդունակություն պիտի ունենան, վորպեսզի բոլոր շնորքով ուժերին, կուլտ. ուժերին համախմբեն իրենց շուրջը և հենվելով նրանց ինքնագործունեյության վրա, ամեն ինչ իր ժամանակին հասցնեն:

Հիմա մի հարց է ծագում—վորտեղից գտնել այդպիսի ղեկավարներ:

Ահա թվենք: Ամենից առաջ ակումբային ակտիվից պիտի գտնել, հետո կան բավական ուժեր. միության անդամ համալսարանական ուսանողությունը, պրոֆակտիվը և ինքը բանվորական լայն մասսան, վոր բավական թվով լավ կազմակերպիչ-ղեկավար ընկերներ ունի:

Ցանկալի յե միջմիութենական և խոշոր միությունների գծով, ակումբներին կից ունենալ մշտական խմբակ՝ եքսկուրսիոն կազմակերպիչ-ղեկավարների և սխառնա-

տիկ պարապմունքների միջոցով, վերակա-
վորել, պատրաստել եքսկուրսիոնիստների
կազմեր: Սույն բանվորական կենտրոննե-
րում կան հատուկ դպրոցներ, դասընթացք-
ներ եքսկուրսիոն զեկավարների համար:

ՍՏ. ԼԻՍԻՑՅԱՆ

ԵՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ

ՀԱՎԵԼՎԱԾ. — Եփսոսոսիաներ Վրաստա-
նում յեվ Ադրբեջանում:

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Այս մարշրուտները առաջին փորձն են Հայաստանի սահմաններում հնարավոր եքսպլուատիաների գլխավոր ուղիները նշելու: Աշխատել ենք ցույց տալ թե այդ ուղիների ինչ յերևույթների վրա կարելի չե դարձնել եքսպլուատանտի դիտողությունը: Այդ ցուցմունքները ոգտավետ կարող են լինել նաև այն անձնավորությունների համար, վորոնք տեղերում, տեղական բազաներում կուղենան յեկվորների համար ուղեցույց հանդիսանալ նրանց շրջագայությունների ժամանակ:

Հայաստանից դուրս, Անդրկովկասյան մյուս հանրապետությունների համար բերված են միայն այն մարշրուտները, վորոնք թիֆլիսից տանում են դեպի ծայրակետերը՝ Բաթում, Բազու և Վլադիկավկաս:

Գրքույկը կազմել ենք ՀՍԽՀ Կենտր. Գավառագիտական Բյուրոյի ունեցած նյութերի հիման վրա:

№ 1. ՅԵՐԵՎԱՆ — ԴԻԼԻՋԱՆ

(113 կլմ. խճուղի)

ՅԵՐԵՎԱՆ (1042 մ. ծովի մակերևույթից)

Յերևանը վորպես Հայաստանի Ս. Խ. Հանրապետության մայրաքաղաք Հանրապետական բարձրագույն հիմնարկները: Ժողկոմխորհ, Կենտգործկոմ (Լենինի փողոց):

Զրոսանք Արովյանի (Սուրեն Սպանդարյանի արձանը) և Շահումյանի փողոցներով, Կոմունարների այգու մ (Ստյոպա Ալլաի վերդյանի արձանը), հին արհեստանոցների և քարվանսարանների թաղով, հին բազարով, Կոնդ քաղաքամասով:

Այց Սարգարի պալատի (Կանանոց և մեջիդ) միացորդներին: Տեսարան դեպի Մասիսները, Արագածն ու Հրազդանի ձորը: Գյոյ-մեջիդ և իր բակը: Հին թրքական բաղանիք:

Այց Նորքին:

Յերևանի պլանը: Ծանոթություն նոր
պլանի հետ:

Յերևանի այգիների վոռագումը. Հրազ-
դանից և Գետառից հանած առուները:

Խորում-բուլաղ. Հրազդանի ձորի բա-
զալտի և տուֆի շերտերը: Հիդրոշեն (2.800
ձիաուժ.)—առու, մեքենաների շենքը. հիդ-
րոշենի նշանակությունը:

Զրմուղ: Նոր բաղանիք — (Խորհուրդնե-
րի փ. 14):

Յերևանի պտղաբուծությունն ու այգի-
գործությունը: 1 խորհրդային տնտեսու-
թյունը (նախկին Սարգարի և կից այգիներ-
ը — 67 հեկտար) — նրա գիտական և գործնա-
կան նշանակությունը: Ողերևութաբանական
կայանը՝ Հայաստանի կենտրոնական կայան:

Պատուհների չորացում և կոնսերվացում:
Կոնսերվի գործարան — (Լենինի փողոց, 9).

Գինեգործությունը Յերևանում: Հին
հնձան և հին նկուղ՝ կարասներով: «Արարատ»
տրեստը և իր գործարանը (Շահումյան փո-
ղոց 31) — գինեգործական, ողեքարշ, կոն-
յակային բաժինները, նկուղները, տակառա-
շինարանը: Կարմիր անկյուն:

Հայրամբակ և նրա գործարանը (յեր-
կաթուղու կայարանի մոտ). — բամբակազտա-

րան, ձեթի և ոճառի գործարաններ: Կարմիր
անկյուն:

Կաշիի գործարաններ՝ 1-նը (կայարանի
մոտ) և 11-րդը (Հրազդանի ափին). նոր սար-
քավորում. սոսնձագործության և մուշտակ-
ների բաժիններ, ելեքտրաղաց:

Գարեջրի գործարան (Հրազդանի ափին):
Լիմոնադի գործարան («Արարատ» գոր-
ծարանի մոտ):

Ծխախոտի գործարան (Ղանթարի մոտ)
Մեխանիկական գործարան (Լենինի
փող. 28) — մեխանիկական (փականագործ և
շրջատաշ) բաժին, ձուլարան, դարբնոց,
կաղապարանոց:

Կարրիտի գործարան (կայարանի մոտ):
Գորգի արհեստանոց (Մսի շարք, 38).
տեղական և յեվրոպական նախշեր. բուսա-
կան ներկեր:

Հայկինո (անկյուն Սպանդարյան և
Տերյան փ. փ.) աղցիոներական ընկերու-
թյունը կինոլաբորատորիայով և կինո գոր-
ծարանով:

Տպարաններ՝ ա) Պոլիգրաֆտրեստի 1-ին
(Ռուբենի փ., Կուլտուրայի տուն) — լինոտիպ
և ձուլարան, և 11-րդ (անկյուն Սպան-
դարյան և Րաֆֆու փ. փ.) — ցինկոգրաֆիա,
վիմագրատուն, գծարան, կազմատուն, և բ)

Պետհրատի (Պորհուրդների փ. 2) տպարան
կազմատնով:

Պրոֆեսիոնալ կազմակերպությունները:
Կոոպերատիվի ցանցն ու աշխատանք-
ները:

Կ Ր Թ ա կ ա ն հ ա ս տ ա տ ու թ յ ու ն-
ն է ր. -- 1. Պետհամալսարան (Արովյան փ.)
— մանկավարժական (պատմա-լեզվագիտա-
կան, կենսաբանական և մաթեմատիկական
բաժիններով), սոցիալ-տնտեսական, բժշկա-
կան, գյուղատնտեսական, տեխնիկական
ֆակուլտետներ: Լաբորատորիաներ—քիմի-
ական, ֆիզիքական և ֆիզիոլոգիական. բնա-
պատմական թանգարան: Կաթնատնտեսա-
կան ֆերմա, Անատոմիկոլմ: Գրադարան:

2. Կոնսերվատորիա (Սպանդարյան փ.
60)—դաշնամուրի, ջութակի, վիոլոնչելի,
արևելյան գործիքների, փողավոր գործիքնե-
րի և յերգեցողության դասարաններ:

3. Փեղարվեստական—արդյունաբերա-
կան տեխնիկոլմ (Տպագրողների փողոց 2)—
նկարչություն և քանդակագործություն.
արհեստանոցներ. ա) ասեղնագործի (Շահ-
ումյան փ. 49) և բ) վոսկերչության (Արով-
յան փողոց 2) գ) բրուտանոց:

Թ ա ն գ ա ր ա ն ն է ր. — 1. Պետթան-
գարան (Արովյան փ. Կուլտուրայի տուն):

Բաժիններ՝ գեղարվեստական (արևմտա-
յիվրոպական, ռուսական և հայկական ար-
վեստ), հնագիտական (քարե, բրոնզե և յեր-
կաթե դարերի իրեր. քանդակներ. Անիի հը-
նություններ), ազգագրական, պատմագրա-
կան և հեղափոխական բաժիններ:

2. Գյուղատնտեսական թանգարան
(Կուլտուրայի տուն) և գյուղատնտեսական
լաբորատորիա:

3. Մանկավարժական թանգարան (Ա-
միրյան փ. 26)—Ֆիզիկո-քիմիական, բնա-
պատմական, աշխարհագրական և հասարա-
գիտական բաժիններ. արհեստանոց:

Հ ա ն ր ա յ ի ն մ ա տ ե ն ա դ ա ր ա ն
Ա. Ֆ. Մ յ ա ս ն ի կ յ ա ն ի ա ն վ ա ն, —
(Սպանդարյան, 1. Կուլտուրայի տուն)—մոտ
200 հազար գիրք. ընթերցարաններ հասա-
կավորների և մանուկների համար:

Բ ժ շ կ ա կ ա ն հ ա ս տ ա տ ու թ յ ու ն-
ն է ր. — 1. Տրոպիկական ինստիտուտ (Արով-
յան փ. 41)—մալարիայի հետազոտություն.
պայքար մալարիայի դեմ:

2. Լենինի անվան կլինիկական ինստի-
տուտ (Արովյան փ., Համալսարանին կից)
— 140 մահճակալ. տերոպևտիկ, նյարդային,
խիրուրդիական և մանկաբաժնական-գենիկո-

լողիական բաժանմունքներ. ռենտգենյան
կարիներ. ելեկտրոբուժարան:

Անչափահասների ուղղիչ կրթական գա-
ղութ (Կոնդ):

Գյուղացու տուն. — (Գյուղացու
2-րդ փ. 3): — Մահճակալներ. սայլերի և
տավարի բակ: Գյուղատնտեսական գործիք-
ների ցուցագրական պահեստ:

Յերևանի անցյալը: Յերևանի խաների
կառավարությունը: Ռուսաց տիրապետու-
թյան հաստատվելը: Յերևանը XIX և XX-րդ
դարերում:

Հեղափոխական շարժումները Յերե-
վանում:

Կուսակցական բարձր հիմնարկ-
ները: ՀԿԿ Կենտկոմ և Յերևանի Գավկուս-
կոմ (Արովյան փ. 33 և 34): Ազիտ կարի-
ներ (ծանոթություն կուսլուսավորության
աշխատանքներին):

ՔԱՆԱՔԵՌ Յերևանի և Արարատյան
դաշտի տեսարանը Քանաքեռի կողմից. Մա-
սիսներն ու Արագածը Քանաքեռից: Արով-
յանի տունը:

ՊՏՂՆԻ, ԵՅԼԱՌ, ՍՈՒԽՈՅ ՖԱՆՏԱՆ,
ՆԵՐՔԻՆ ԱԽՏԱ. — Յերկրաբանական կազմու-
թյունը. որսիղիանի («սատանի յեղունգի»)
շերտեր:

Տնտեսության փոփոխվելը՝ յերկրի
բարձրանալուն հետ միասին:

Պտղնու հին տաճարը:

Եյլառի սեպագիր արձանագրությունը:

ՅԵԼԵՆՈՎԿԱ (1940 մ. ծովի մակ.): Ծա-
նոթություն ուս ազգաբնակչության Հայաս-
տան գաղթելու հանգամանքների հետ: Ռուս-
ների նիստ ու կացը և տնտեսությունը.
տարբերությունը տեղական նիստ ու կացից
ու տնտեսությունից. ուսական տարրի և
տեղացիների փոխհարաբերությունը նախա-
հեղափոխական շրջանում և Խորհրդային լի-
խանություն հաստատվելուց հետո: Ռուսա-
կան և տեղական կուլտուրաների փոխազ-
դեցությունը:

Մալականների կրոնական հայացքները,
Պրիգուններ:

ՍԵՎԱՆԱ ԼԻՃ (1925 մ. ծովի մակ.):
վութից):

Շրջագայություն Սևանա լճով շոգենա-
վով:

Լճի տարածությունը (ամենամեծ յեր-
կարությունը՝ 72,5 կլմ., ամենամեծ լայնու-
թյունը՝ 37,5 կլմ., մակերեսով՝ 1.398,7 ք.
կլմ.) և հատակի ձևն ու խորությունը (ա-
մենախոր տեղը կղզու հյուսիս արևելյան
կողմը՝ 95 մետր), լճի հրաբխային ծագումը

(չե պարզված՝ արդյոք մի ահագին հանգած հրաբուլիսի խառնարան ե, թե՞ հին հրաբուլիսների շրջանակի մեջ իջած յերկրակեղևի բեկոր, թե՞ հրաբուլիսային ուժերի գործունեությունից բերանը գոցած ահագին ձոր): Լճի ջրի մակերեսի պարբերաբար բարձրանալն ու իջնելը: Լճի բուսական և կենդանական աշխարհները: Սևանա լճի ձկները. սիգի ձկան բուծումը: Ձկնաբուծական կայան ձկնագիտական բաժնով: Ձկնորսություն հին և նոր ձկերը և չափերը: Ձկան արտահանություն նախկին և այժմյան կազմակերպությունը:

Նավարկությունը Սևանա լճի վրա:

Սևանա լճի վոդոգողական նշանակությունը: Նոր ծրագիրներ:

Սևանա լճի ավազանի անցյալ կյանքը: Մարդու սկզբնական կայաններ այդ ավազանում: Ուրարդական մնացորդները. Որթաքլուի, Քոլադուանի, Չաղալուի բեռնագիրները: Սևանա լճի ավազանը վորպես Սյունիքի մի մասը: Այրիվանք. Նորագույն Սևանա կղզին և նրա վանքերը:

Արշալույս և վերջալույս Սևանա կղզու վրա:

ՍԵՄՅՈՒՆՈՎԿԱ (2170 մ.):

Վերելք գետի լեռնանցքը Արաքսի հով-

տից գետի կուրի հովիտը (Ջրբաժան), Տարբերություն Յելենովկայի և Սեմյոնովկայի տնտեսությունից մեջ: Պանրագործարան:

Տեսարան արշալույսին և վերջալույսին գետի Սևանա լիճը:

Ռուս գաղութների դասավորությունը քաղաքականությունը Հայաստանում-ցարական ժամանակ (լեռնանցքներին և ճանապարհների հանգույցներին):

ԴԻԼԻՉԱՆ (1257 մ.):

Եջք խճուղու զիկզակներով: Դիտողություն Դիլիջանի անտառի:

№ 2. ԴԻԼԻՉԱՆ-ԱՆՍՏԱՏԱ

(75 կմ.):

ԴԻԼԻՉԱՆ (1257 մ. ծովի մակ.):

Դիլիջանը վորպես գավառի կենտրոն: Գավառի բաժանումը ըստ գավառամասերի: Դիրքն ու կլիման: Գետի աջակողմյան ափին սարալանջի սահումը:

Տեղական անտառը, չամի պուրակներ: Անտառային տնկարան: Պտղաբուծությունը և նրա աջողությունները:

Անասնաբուծության նրա դիտական և գործնական նշանակությունը: Արհեստներ:

փեթականոց, պտղաբուծարան և պտղատու
պարտեզ: Կաթնատնտեսություն:

